

ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանն այցելել է կարկուտից տուժած համայնքներ

Հունիսի 5-ի գիշերը տեղացած կարկուտը վնասել է Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ խոշորացված համայնքի Ծիլքար և Լեռնապար բնակավայրերի աշնանացան ցորենի, գարնանացան կորնգանի և գարու արտերը: Պատճառված վնասներին տեղում ծանոթանալու նպատակով

ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը, Ծաղկահովիտի համայնքապետ Նորահին Հակոբյանի և համայնքի բնակիչների ուղեկցությամբ, այցելել է կարկուտից տուժած դաշտեր: Նախնական տվյալներով կարկուտ է տեղացել շուրջ 300 հա ցանքատարածությունների վրա՝ տեղ-տեղ պատճառելով 20-80% վնասվածություն:

Վնասի չափը ճշգրիտ հնարավոր կլինի որոշել 2-3 օր անց միայն: Մարզի ղեկավարը հանձնարարել է ստեղծել հանձնաժողով, այցելել դաշտեր, անհատական և մանրամասն մասնագիտական ուսումնասիրություն իրականացնել վնասի իրական չափերը արձանագրելու համար:

Մարզպետարանի գյուղատնտեսության ոլորտի պատասխանատուների կողմից այսօր կատարվել է կարկտահարված տարածքների տվյալների հաշվառում: Բնակիչների հետ զրույցի ընթացքում մարզպետն ընդգծել է, որ հարցն իր անմիջական վերահսկողության ներքո է գտնվում: Յուրաքանչյուր ցանքատարածության համար ցուցաբերվելու է անհատական մոտեցում, կատարվելու է պատշաճ ուսումնասիրություն, որի արձանագրություններն ստանալուն պես փոխհատուցման հարցը անձամբ կներկայացնի ՀՀ կառավարություն:

Բնակիչների հետ մարզպետը քննարկել է նաև գյուղատնտեսությանն առնչվող այլ հարցեր, ճանապարհի վերանորոգման, համայնքի զարգացման և համայնքային նշանակության հարցերի լայն շրջանակ: